## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 17/46-1

**14.09.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/46-1 ծածկագրով Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի**

ք.Երևան «05» դեկտեմբերի 2017թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 14.09.2017թ. կնքված N «ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/46-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալներն ավելացնելու նպատակով, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրի 4.1 կետում «10250000 (տաս միլիոն երկու հարյուր հիսուն հազար)» թվերն ու բառերը փոխարինել «11250000 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար))»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյունակների թվերը փոխարինել «11,250,000» թվերով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կառավարության աշխատակազմ | «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական թ.1 շենք | ք. Երևան, Ռուբինյանց փ. 31 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատ բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011022085 | Հ/Հ 1510012745550100 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00873228 |
| էլ. հասցեն՝ gnumner@gov.am | էլ. հասցեն՝ info@flashmotors.am |
| | Հեռ. (060)522555, (091)522855 |
| / Դ. Բեգլարյան / | / Ա. Լալայան / |
| Կ.Տ | Կ.Տ |